

## ՏՆԿԻ ԸՆՏՐԵԼՈՒՑ ԱՆՅՐԱԺԵՇՏ Է

առաջնորդվել տնկանյութի որակը բնութագրող հետևյալ հիմնական հատկանիշներով.

**Տնկիների տարիքը`** հնդավորների համար ընդունված է օգտագործել 2 տարեկան, իսկ կորիզավորների, հատկապես դեղձենու և ծիրանենու համար` 1 տարեկան տնկիները: Երեք և ավելի տարեկան տնկիների կաչողականությունը շատ ավելի ցածր է:

**Արմատային համակարգը`** չպետք է ունենա ցամաքած կամ բորբոսաշերտով պատված արմատներ: Արմատների մաշկը առողջ տեսք պիտի ունենա և բնափայտից հեշտությամբ չառանձնանա: Տնկանյութի դասակարգումը ըստ արմատային համակարգի.

- **1ին կարգի տնկիներ** են համարվում լավ զարգացած 3-5 հատ առողջ 30 սմ երկարությամբ կմախքային արմատներ ունեցող բույսը:
- **2րդ կարգի տնկիներ** են համարվում լավ զարգացած 2-3 հատ 23-25սմ երկարությամբ կմախքային արմատներ ունեցող բույսը:

**Բնի և սաղարթի կմախքային ճյուղերի աճը`** Տնկիների բարձրությունը կախված պտղատեսակից և սորտից ցանկալի է, որ 120 սմ ից մինչև 180 սմ լինեն: Բուերը պետք է ունենա 2սմ ոչ պակաս հաստություն: Բողբոջները քնած վիճակում պիտի լինեն: Չպետք է ունենա մեխանիկական վնասվածքներ:

**Բնափայտի վրա առկա հիվանդությունների և վնասատուների նշաններ:**

**Պատվաստի սպին`** Պատվաստակալի և պատվաստի սերտաճումը պիտի լիարժեք լինի և չոր: Պատվաստակալի վրա որևէ ճյուղավորություններ թույլատրելի չէ: Հաստությունը արմատավզիկին մոտ ոչ պակաս քան 1սմ:

**Բնափայտի կեղևի գույնով կարելի է որոշել պտղի գունավորումը`** որոշ պտղատուների, օրինակ խնձորենիների տնկիների կեղևի մուգ դարչնագույնի երանգներով կարող ենք որոշել, որ պտուղները կարմիր են: Ավելի բաց կանաչի երանգներով կեղև ունեցողները` դեղին կամ կանաչ պտուղներ:



## ՏՆԿՄԱՆ ԱՃԻՆԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԶԵՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ

**Տնկարկի տեղաձևում** և ծառերի տեղի նմուշառում:

**Փոսերի նախապատրաստում** Անհրաժեշտ է փորել 50-60 սմ խորությամբ փոսեր: Փոսերը կարելի է փորել ձեռքով և տրակտորի կցորդիչով: Փոսի մեջ լցվում է 1-2 բաի փտած գոմաղբ կամ կենսահումուս, որը արմատների և մազարմատների այրվածք չի առաջացնում:

**Տնկանյութի նախապատրաստում** Տնկումից առաջ անհրաժեշտ է կատարել արմատների թարմացում` այգու մկրատով հեռացվում է կենտրոնական (առանցքային) և կողային արմատների եզրից 2-3սմ չափով: Այնուհետև տնկին թաթախվում է գոմաղբահեղուկի կամ հեղուկ կենսահումուսի մեջ և հետո նոր տնկվում:

**Տնկում** Արդեն իսկ նախապատրաստված տնկին հարկավոր է դնել փոսի մեջ այնպես, որ արմատային համակարգը աստղի պես բացվի և վրան լցնել հողը: Պտղատու ծառատեսակների դեպքում հատուկ ուշադրություն է պետք դարձնել պատվաստի տեղին: Տնկին այնպիսի խորությամբ է դրվում հողի մեջ, որ պատվաստի հատվածը գտնվի հողի մակերեսից 6-7 սմ բարձրության վրա: Տնկին այնպես տնկել, որ պատվաստի սպին լինի դեպի հարավ-արևելք: Միայն տնկարկը կարող է բերել ծառերի վատ աճի և ուշ պտղաբերման:

**Ոռոգում** Տնկումից հետո ծառի շուրջը պատրաստվում է բաժակ և անմիջապես ջրել: Առաջին երկու ջուրը տրվում է 4-5 օր ընդմիջումով: Տնկման առաջին տարին ցանկալի է սովորականից 2-3 ջուր ավել տալ:

**Սպիտակեցում** Նորատունկ ծառերը առաջին 2 տարում չի կարելի ծառերի բները սպիտակեցնել: Միայն 3 տարեկան ծառը կարելի է սպիտակեցնել կրի 20% լուծույթով:

**Մկնանման կրծողների դեմ պայքար** Ամառի տարածքներում տնկարկ կատարելու դեպքում ցանկալի է նորատունկ ծառերի բաժակների մեջ դնել մկնանման կրծողների համար գրավչանյութ: Կարելի է օգտագործել` ցինկ ֆոսֆիդ (փոշի) կամ էթիլ ֆենացին (հեղուկ): Դեռատիզացիայի իրականացման դեպքում պարտադիր հայտարարություն փակցնել գյուղապետարանում և տնտեսության դարպասների վրա: Արգելել ԽԵԿ արածցումը:





# 1 ԱՌՈՐՑ ՏՆԿԻՆԵՐ

# 2 ԱՌՈՐՑ ԱՐՄԱՆԵՐ



# 3 ՀԻՎԱՆԴ ԱՐՄԱՆԵՐ

# 4 ՆԵԿՐՈՉՆԵՐ

Կարող են առաջանալ ոչ բարենպաստ կլիմայական գործոններից, օր. երկարատև երաշտ, սաստիկ և երկարատև ցրտերից: Թուլացած տնկիները շատ շուտ են թափարկվում և հիվանդաբեր միկրոօրգանիզմներով վարակման, այնուհետև չորացման:



# 5 ԿԵՐԵՎԻ ՎՐԱ ԱՌԱՑԱՑԱԾ ԾԵՂՔԵՐ

Ֆիտոպաթոգեն սնկերը ներթափանցելով տնկիների բնիկ եղևի վրա առաջացած ճեղքերով, սկսում է զարգանալ և ներթափանցել բնափայտի մեջ: Արդյունքում բնափայտը հիվանդանում է և տնկին սկսում է չորանալ:



# 6 ԳՈՄՈՉ

Խնժառիտությունը պայմանավորված է ինչպես մեխանիկական վնասվածքներով, ջերմաստիճանային կտրուկ տատանումներով և այլն: Կարող ենք ասել, որ դա տարբեր մեխանիկական վնասվածքների և այլ թուլացումների նկատմամբ, բոյսի հակազդեցություն է:



# ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐԵԼ ՈՐԱԿՅԱԼ ՏՆԿԻՆԵՐ

Որակյալ տնկանյութն է երաշխիքը նոր հիմնադրվող այգու հետագա զարգացման և պտղաբերման որակը և քանակը:

Փորձը ցույց է տվել, որ լավ ձևավորված, ուժեղ աճ և արմատային համակարգ ունեցող տնկիներով հիմնադրված այգիների կաջողականությունը և նրանց լիարժեքությունը բարձր են, ծառերի աճն ու զարգացումն ընթանում են արագ և ավելի շուտ են մտնում բերքատվության մեջ: Իսկ ցածր որակի և ստանդարտին չհամապատասխանող տնկանյութի կիրառության հետ եկած խնդիրները ուղեկցում են այգետիրոջը այգու ամբողջ կյանքի ընթացքում:



**Brot für die Welt**

**EPER**